ԷԿՈՆՈՄԻԿԱ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵԿՈՂ ՏԱՐՎԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՈՒ ՀԵՏՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Նշվեց, որ կարեւոր է, երկիրը շուտ դուրս գա ճգնաժամից, հնարավորինս պահպանվեն եւ վերականգնվեն աշխատատեղերը եւ բարելավվի բնակչության եկամտի մակարդակը:

Հանդիպմանը առանձնակի ուշադրություն հատկացվեց այն քայլերին, որոնց իրականացումը ծրագրվում է բիզնեսին եւ քաղաքացիների սոցիալական աջակցության ուղղությամբ: Ընդգծվեց, որ հետհամավարակային շրջանում հատկապես կարեւոր կլինի Վրաստանի կառավարության, բիզնեսի եւ Ազգային բանկի միջեւ համագործակցության հետագա ամրապնդումը: Հանդիպմանը քննարկվեցին նաեւ հետհամավարակային շրջանում դրամավարկային քաղաքականության հետ կապված հարցեր, որի մասին խոսեց Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն:

Հանդիպմանը կառավարության տնտեսական թիմից մասնակցում էին փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Մայա Ցքիտիշվիլին, ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան: Քննարկմանը հեռակա կարգով միացավ Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն: Գործարարների կողմից հանդիպմանը մասնակցում էին գործարարների միության նախագահ Սոսո Փխակաձեն, «Սաքարթվելոս բանկի» գլխավոր տնօրեն Արչիլ Գաչեչիլաձեն եւ TBC բանկի գլխավոր տնօրեն Վախթանգ Բուցխրիկիձեն:

# ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է

Նոյեմբերի 25-ին Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Մայա Ցքիտիշվիլին, ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին, կառավարության տնտեսական թիմի անդամները երկրում համավարակաբանական իրավիճակից ելնելով, հնարավոր լրացուցիչ կետային սահմանափակումների ու այս գործընթացում աշխատատեղերի առավել պահպանման հարցերով հանդիպում ունեցան տոնավաճառների ներկայացուցիչների հետ:

Նախարարների կաբինետի անդամները, կառավարության տնտեսական թիմի անդամները տոնավաճառների ներկայացուցիչներից մանրամասն տեղեկատվություն ստացան համավարակի պայմաններում նրանց առջեւ ծառացած մարտահրավերների վերաբերյալ եւ խոսեցին այն լրացուցիչ սահմանափակումների մասին, որոնք տնտեսական նվազ կորուստներով կարող են հաստատվել վարակի տարածումը դանդաղեցնելու համար:

Հանդիպմանը նշվեց, որ լրացուցիչ կետային սահմանափակումներ հաստատելու հարցում կառավարության հիմնական խնդիրը աշխատատեղերի հնարավորինս պահպանումն է: Հանդիպմանը վերահաստատվել է, որ այս փուլում լիարժեք արգելափակում չի նախատեսվում:

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Մեկ անգամ եւս շեշտվեց, որ կառավարության հիմնական խնդիրներն են ինչպես վարակի աճի դանդաղեցումը եւ քաղաքացիների առողջության մասին հոգ տանելը, այնպես էլ՝ աշխատատեղերի պահպանումը, տնտեսության վրա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:

Ինտենսիվ հանդիպումների ընթացքում կառավարության ղեկավարը բիզնեսի ներկայացուցիչներից տեղեկատվություն է ստանում իրենց առջեւ ծառացած մարտահրավերների վերաբերյալ, եւ այդ հաղորդակցությունն ակտիվորեն շարունակվում է:

Բացի այդ, կառավարությունն ակտիվ աշխատում է քաղաքացիների համար նպատակային սոցիալական աջակցության փաթեթի վրա, եւ շուտով կհայտարարվեն նաեւ այն քայլերը, որոնք կառավարությունը կձեռնարկի կորոնավիրուսի երկրորդ ալիքի պայմաններում

Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Մայա Ցքիտիշվիլու խոսքերով, այս բարդ իրավիճակում կառավարության գլխավոր առաջնահերթությունը շարունակում է մնալ քաղաքացիների առողջությունը, թեպետ միաժամանակ քայլեր են իրականացվում տնտեսական իրավիճակի կայունացման, մարդկանց եկամուտներով ապահովելու, եւ ամենակարեւորը, աշխատատեղերի պահպանման ուղղությամբ::






ԿՐԹԱԿԱՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՀԵՌԱՎԱՐ

***Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից տարածված տեղեկատվության համաձայն, Թբիլիսիի, Ռուսթավիի, Քութայիսիի, Զուգդիդիի, Թելավիի, Զեստափոնիի, Գորիի, Գարդաբանիի, Փոթիի եւ Մառնեուլիի դպրոցներում ուսումնական գործընթացը հեռավար կշարունակվի մինչեւ 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի ավարտը:***

«Երկրում գոյություն ունեցող համաճարակի հետ կապված իրավիճակի եւ մեծ քաղաքներում տեղաշարժի նվազեցման նպատակով, միջգերատեսչական համակարգող խորհուրդը որոշում է կայացրել, ըստ որի՝ Վրաստանի խոշոր քաղաքներում մինչեւ 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտը, բոլոր դասարանների աշակերտների, ինչպես նաեւ մասնավոր դպրոցների աշակերտների համար, դասերը կանցկացվեն հեռավար ռեժիմով: Որոշումը վերաբերում է նաեւ Աջարիայի Ինքնավար Հանրապետությանը»,- նշված է նախարարության հայտարարության մեջ:

# ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ ԵՆ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՈՎ

ՇԵՂԱՀԱՅԵՑՈՒՄՆԱ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

***Վրաստանի գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տարածած հաղորդագրության համաձայն, նոյեմբերին նախատեսված մանկավարժների իրավասության հաստատման քննությունը չի կայանա, եւ այդ հարցով որոշումը կայացնելու է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:***

Մանկավարժների իրավասության հաստատման քննությունների՝ երկրում ստեղծված համաճարակային իրավիճակից ելնելով, անորոշ ժամանակով հետաձգման վերաբերյալ հաղորդագրությունը Վրաստանի Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնն ուղարկել է բոլոր դիտորդներին եւ կոորդինատորներին:

Գերատեսչության տեղեկատվությամբ՝ մոտ ժամանակներում Վրաստանի կրթության նախարարությունը կհրապարակի տեղեկություն ուսուցիչների իրավասության հաստատման քննությունների վերաբերյալ:

Հիշեցնենք՝ 2020 թվականի ամռանը պետք է անցկացվեն գործող ուսուցիչների հերթական իրավասության հաստատման քննությունները, սակայն, կորոնավիրուսի պատճառով, դրանք հետաձգվեցին մինչեւ նոյեմբեր:

COVID - 19

# ՎՐԱՍՏԱՆԸ «ԿԱՆԱՉ ԳՈՏՈՒՑ» ՎԵՐԱԾՎԵԼ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱԿԱՌԵԿՈՐԴԱԿՐԻ

***Մինչեւ նոյեմբերի 24-ը, վերջին յոթ օրվա տվյալների համաձայն, որոնք հրապարակել է «New York Times» ամերիկյան պարբերականը, Վրաստանը 100 000 բնակչին բաժին ընկնող կորոնավիրուսի դեպքերի թվով առաջինն է աշխարհում:***

Վրաստանից հետո տարածվածության ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրների շարքում են Լյուքսեմբուրգը, Չեռնոգորիան եւ Սերբիան:

Վրաստանը 100 000 բնակչի հաշվով մահացության ցուցանիշով աղյուսակում 13-րդն է:

Հիշեցնենք, որ կորոնավիրուսի առաջին դեպքը Վրաստանում գրանցվել էր փետրվարի 26-ին: Նոյեմբերի 27-ին երկրում գրանցվել է վարակման 4 780 նոր դեպք, ապաքինվել է 3 489 մարդ, մահացել է 37 մարդ: Նոյեմբերի 27-ի դրությամբ, երկրում հաստատված է կորոնավարակի 123 470 դեպք, որից բուժվել է 102 270 հիվանդ, մահացել՝ 1161-ը:

Կարանտինային ռեժիմում է 2 037 մարդ, ստացիոնար հսկողության տակ է 6 165 բուժառու, կովիդ-հյուրանոցում՝ 3 920-ը:

Արտասահմանից Վրաստան է տեղափոխվել 41 քաղաքացի:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՆՑԵԼ Է 60 ՄԻԼԻՈՆԸ

***COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 61 377 միլիոնից: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 438 984 հազարը: Ապաքինվել է 42 միլիոն 451 357 մարդ:***

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է **ԱՄՆ**-ը, որտեղ կա հաստատված **13 249 447** դեպք: Այստեղ մահացածների թիվը **269 597** է: Երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **9 309 871**-ի, մահացածներինը՝ **135 752**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է, որտեղ վարակվել է **6 204 570**, մահացել՝ **171 497** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **2 215 533**, վարակի հետեւանքով մահացել՝ **38 558** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան, Իսպանիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Արգենտինան եւ Կոլումբիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **132 346-ի**, մահացածներինը՝ **2 090-ի**, ապաքինվածներինը՝ **105 149-ի**:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **106 101** մարդ: Վարակից մահացել է **1 256,** ապաքինվել՝ **68 572** մարդ:

Վերջին տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **123 470,** մահացել՝ **1 161,** ապաքինվել՝ **102 270** մարդ:

*Նոյեմբերի 27-ին կորոնավիրուսով վարակման 4 780 նոր դեպքերից **1 863-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 664-ը, Իմերեթիում՝ 648-ը, Քվեմո Քարթլիում՝ 319-ը, Շիդա Քարթլիում՝ 259-ը, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 385-ը, Կախեթիում՝ 280-ը, Գուրիայում՝ 102-ը, Մցխեթա-Մթիանեթիում՝ 128-ը, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 43, Սամցխե-Ջավախեթիում՝ 89-ը:***

ԳՈՐԾԱԴԻՐ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՄԵՆԱՇՐՋԱՆԱՌՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Թբիլիսի, Քութայիսի, Բաթումի, Ռուսթավի, Գորի, Զուգդիդի, Փոթի, Թելավի քաղաքների մունիցիպալիտետների վարչական սահմաններում, հասարակական տրանսպորտի աշխատանքը լրիվությամբ դադարեցվում է նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 24-ը, ինչպես նաեւ՝ հունվարի 3-16-ը:

***- Թույլատրելի՞ է, արդյոք, ցերեկվա ժամերին տաքսիով երթեւեկումը:***

- Տաքսիով երթեւեկությունը թույլատրելի է 05:00-ից մինչեւ ժամը 21:00-ը:

***- Ուժի՞ մեջ է, արդյոք, գիշերային ժամերին երթեւեկության արգելքը:***

- Այո, երկրի ողջ տարածքով 21:00-ից մինչեւ 05:00 ժամը արգելվում է ինչպես հետիոտն, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցներով տեղաշարժը, ինչպես նաեւ հանրային տարածքում գտնվելը:

Բացառություն է կազմում դեկտեմբերի 31-ի գիշերը, ժամը 21:00-ից մինչեւ հունվարի 1-ի 05:00-ը եւ Սուրբ Ծննդյան գիշերը՝ 21:00-ից մինչեւ հունվար 7-ի 05:00 ժամը, այդ ժամանակ տեղաշարժերի սահմանափակում չի լինի:

***- Լեռնադահուկային հանգստավայրերում (Բակուրիանի, Գուդաուրի, Գոդերձի, Մեստիա) սահմանափակվո՞ւմ է, արդյոք, մունիցիպալային տրանսպորտով երթեւեկությունը:***

- Այո, սահմանափակվում է:

***- Մեծ քաղաքներում սահմանված սահմանափակումները տարածվո՞ւմ են, արդյոք, գյուղերում եւ մյուս բնակավայրերում:***

- Մեծ քաղաքներում գործում է երթեւեկության սահմանափակումը 21:00-ից մինչեւ ժամը 05:00-ը, սահմանափակվում է նաեւ միջքաղաքային տրանսպորտի երթեւեկությունը, սննդի օբյեկտների, Ֆիթնես ակումբների եւ լողավազանների գործունեությունը: Մեծ քաղաքներում սահմանված մյուս սահմանափակումները գործում են միայն վերոնշյալ քաղաքների մունիցիպալիտետների վարչական տարածքներում:

Մեծ քաղաքներում սահմանված մյուս սահմանափակումները գործում են միայն վերոնշյալ քաղաքների տարածքներում:

***- Հնարավո՞ր է, արդյոք, տեղաշարժվել մինչեւ նոյեմբերի 28-ը՝ ստացված թույլտվության հիման վրա:***

- Այո, նոյեմբերի 9-ից տրված բոլոր թույլտվությունները մնում են ուժի մեջ:

***- Արգելվո՞ւմ է, արդյոք, 70-ն անց անձանց տեղաշարժը:***

- Արգելված չէ, բայց խորհուրդ է տրվում 70-ն անց անձինք խուսափեն տեղաշարժից:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

***- Ի՞նչ կարգավորումներ են գործելու ռեստորանների եւ սննդի օբյեկտների ուղղությամբ:***

- Երկրի տարածքով ռեստորաններն ու սննդի օբյեկտներն անցնում են մատակարարման սպասարկման: Թույլատրելի է մթերքի մատակարարումը, այսպես կոչված, «takeaway» մատուցման ծառայությունը՝ այսպես կոչված, «Դելիվերը», ավտոմեքենայով փոխադրումը, այսպես կոչված «Դրայվը»:

***- Առեւտրական ո՞ր օբյեկտներին է առնչվում սահմանափակումը:***

- Առեւտրական բոլոր օբյեկտները գործելու են միայն հեռավար, տեղում մատուցման կամ օբյեկտից դուրսբերման ծառայությամբ, առանց իրացման տարածք սպառողների մուտքի:

Այս սահմանափակումը չի առնչվում պարենամթերքի, անասնակերի, կենդանական ծագման, բնական եւ բուսական մթերքների, կենցաղային քիմիայի եւ հիգիենայի, անասնաբուժական դեղորայքի, պեստիցիդների եւ ագրոքիմիկատների, սերմանյութերի եւ տնկիների հատավաճառին, էլեկտրոհաղորդակցության, էլեկտրաէներգիայի, բնական գազի, ջրի, բենզինի, դիզելային վառելանյութի, հեղուկ գազի մատակարարմանը, բժշկական նշանակության ապրանքի, դեղորայքի իրացմանը, թերթի կրպակներին:

***- Երկրի ողջ տարածքով սահմանափակվո՞ւմ է, արդյոք, առեւտրական օբյեկտների գործունեությունը:***

- Ոչ, սահմանափակումն առնչվում է միայն Թբիլիսի, Թելավի, Բաթումի, Քութայիսի, Ռուսթավի, Գորի, Փոթի, Զուգդիդի քաղաքների եւ լեռնադահուկային հանգստավայրերի (Բակուրիանի, Գուդաուրի, Գոդերձի, Մեստիա) տարածքներին:

***- Փակվո՞ւմ են, արդյոք, շուկաներն ու տոնավաճառները:***

- Թբիլիսի, Թելավի, Բաթումի, Քութայիսի, Ռուսթավի, Գորի, Փոթի, Զուգդիդի քաղաքների եւ լեռնադահուկային հանգստավայրերի (Բակուրիանի, Գուդաուրի, Գոդերձի, Մեստիա) տարածքներում գործող բոլոր տեսակի բաց եւ փակ շուկաներն ու տոնավաճառներն անցնում են հեռավար կարգի:

Ագրարային շուկաներն ու տոնավաճառները շարունակում են գործունեությունը՝ պահպանելով առողջապահության նախարարության հանձնարարականները:

***- Արգելքը, առնչվո՞ւմ է, արդյոք, ֆիթնես դահլիճներին եւ լողավազաններին:***

- Ֆիթնես դահլիճների եւ լողավազանների գործունեությունը դադարեցվում է երկրի ողջ տարածքով:

***- Արգելվո՞ւմ է, արդյոք, գեղեցկության սրահների եւ էսթետիկայի կենտրոնների գործունեությունը:***

- Գեղեցկության սրահներն ու էսթետիկայի կենտրոնները շարունակում են գործունեությունը, պահպանելով առողջապահության նախարարության հանձնարարականները:

***- Թույլատրելի՞ է, արդյոք, ցրիչների սպասարկումը, այսպես կոչված, «Դելիվերի» սերվիսը:***

- Այսպես կոչված, «Դելիվերի» սերվիսը թույլատրելի է երկրի ողջ տարածքով:

***-Թույլատրելի՞ է, արդյոք, ցրիչների սպասարկումը 21:00-ից մինչեւ ժամը 05:00-ը:***

- Ցրիչների սպասարկման իրականացման ժամանակ տեղաշարժը թույլատրելի է միայն հատուկ թույլտվության առկայության դեպքում:

***- Արգելվո՞ւմ է, արդյոք, բանկերի, տարադրամային կրպակների, միկրոֆինանսական կազմակերպությունների աշխատանքը:***

- Բանկերի, միկրոֆինանսական կազմակերությունների եւ տարադրամային կրպակների գործունեությունը չի արգելվում:

***- Թույլտարելի՞ է, արդյոք, այցելել սննդի օբյեկտներ եւ ձեռք բերել պարենամթերք:***

- Թույլատրելի է սննդի օբյեկտներից պարենամթերքի դուրսբերումը, այսպես կոչված, «takeaway»: Մասնավորապես, սննդի օբյեկտ մուտք գործելը եւ պարենամթերքի դուրսբերումը:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

***- Ի՞նչ կարգավորումներ են տարածվում դպրոցների, համալսարանների եւ մասնագիտական ուսումնարանների վրա:***

- Թբիլիսի, Թելավի, Բաթումի, Քութայիսի, Ռուսթավի, Գորի, Փոթի, Զուգդիդի քաղաքների եւ լեռնադահուկային հանգստավայրերի (Բակուրիանի, Գուդաուրի, Գոդերձի, Մեստիա) տարածքներում դպրոցները, մասնագիտական ուսումնարաններն ու բուհերը (բացառությամբ՝ բժշկական ծրագրերի) լրիվությամբ անցնում են հեռավար կարգի:

***- Թույլատրելի՞ է, արդյոք, վարժանքների, խորհրդակցությունների, սեմինարների կազմակերպումը՝ մասնակիցների ֆիզիկական ներկայությամբ:***

- Երկրի ողջ տարածքով, բոլոր տեսակի խորհրդատվությունների, վարժանքների անցկացումը թույլատրելի է միայն օնլայն ձեւաչափով:

***- Թույլատրելի՞ են, արդյոք, մշակութային, մարզական միջոցառումները:***

- Մշակութային եւ մարզական միջոցառումների անցկացումը թույլատրելի է միայն օնլայն ձեւաչափով: Ժամանցի միջոցառումների անցկացումը սահմանափակվում է երկրի ողջ տարածքով:

***- Արգելքները տարածվո՞ւմ են, արդյոք, արվեստի եւ սպորտի խմբակներին:***

- Այո, արվեստի, սպորտի խմբակների եւ ստուդիաների աշխատանքը դադարեցվում է երկրի ողջ տարածքով:

***- Արգելվո՞ւմ է, արդյոք, մանկապարտեզների աշխատանքը:***

- Երկրի ողջ տարածքով մասնավոր եւ հանրային մանկապարտեզների աշխատանքը դադարեցվում է:

## ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐԵՐ

***- Սահմանափակվո՞ւմ են, արդյոք, տեղաշարժերը լեռնադահուկային հանգստավայրերում:***

- Բակուրիանիում, Գուդաուրիում, Գոդերձիում եւ Մեստիայում 21:00-ից մինչեւ ժամը 05:00-ը, ինչպես հետիոտն, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցներով տեղաշարժը, նաեւ հանրային տարածքում գտնվելն արգելվում է:

***-Լրացուցիչ ի՞նչ սահմանափակումներ են նախատեսված Բակուրիանիում, Գուդաուրիում, Գոդերձիում եւ Մեստիայում:***

- Վերոնշյալ հանգստավայրերում հյուրանոցների գործունեությունը թույլատրելի է միայն կարանտինային տարածքի կարգավորմամբ:

Սահմանափակվում է դահուկային վազքուղիների եւ ճոպանուղիների գործունեությունը, չեն գործում սննդի օբյեկտները:

## ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

***- Ի՞նչ պատժամիջոցներ են նախատեսված արգելքների խախտման դեպքում:***

- Արգելքների խախտման դեպքում, ֆիզիկական անձը, անհատական գործարարը տուգանվում է 2 հազար լարիով, իսկ իրավաբանական անձը՝ 10 հազար լարիով:

***- Ե՞րբ են ուժի մեջ մտնում վերոնշյալ սահմանափակումները:***

- Սահմանափակումները գործարկվում են 2020 թվականի նոյեմբերի 28-ից:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՉԱՋԱԿՑԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆԸ

***Նոյեմբերի 26-ին Հայաստանի Ազգային ժողովը չաջակցեց երկրում ռազմական չեղարկմանը: Ռազմական դրության չեղարկմանը կողմ քվեարկեց 37 պատգամավոր, 65 -ը՝ դեմ, իսկ 2-ը մնացին ձեռնպահ: Օրենսդրական նախաձեռնության դեմ են քվեարկել հիմնականում իշխող կուսակցության անդամները:***

Ազգային ժողովի Հայաստանում սեպտեմբերի 27-ից հայտարարված ռազմական դրությունը վերացնելու հարցով՝ արտահերթ նիստին «Ռազմական դրությունը վերացնելու մասին» խորհրդարանի որոշման նախագիծը ներկայացրել էր «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը: Աժ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը բացասական եզրակացություն է ներկայացրել:

Նշենք, որ Հայաստանի կառավարությունը դեմ է այս պահին ռազմական դրության ամբողջական վերացմանը: Գործադիրի հավաստմամբ, ռազմական դրության մասին որոշումը կյանքի է կոչել եւ գործի է դրել ոչ միայն ռազմական, այլ նաեւ տնտեսական, առողջապահական եւ այլ իրավակարգավորումների մի ողջ համալիր, եւ այն պետք է վերացվի դրա որոշ դրույթների աստիճանաբար չեղարկման ձեւով:

## ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

***ՀՀ վարչապետի եւ գործարար դաշտի ներկայացուցիչների հետ հանդիպումները անց են կացվում Հայաստանի տնտեսական ակտիվության, ներդրումային միջավայրի վերականգնման հարցերը քննարկելու նպատակով:***

Նոյեմբերի 27-ին վարչապետը հանդիպել է «Յունիքոմփ» ընկերության գլխավոր տնօրեն Արմեն Բալդրյանի եւ «Գրանդ Թորնթոն Հայաստանի» խորհրդի նախագահ Գագիկ Գյուլբուդաղյանի հետ:

Ավելի վաղ վարչապետը հանդիպել էր Արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արսեն Դազարյանի, «ՍԻԼ կոնցեռն» ընկերության հիմնադիր Խաչատուր Սուքիասյանի, «Ալեքս հոլդինգ» ընկերության հիմնադիր Սամվել Ալեքսանյանի, «Սովրանո» ընկերության սեփականատեր Արման Սահակյանի, «Սպայկա» ընկերության սեփականատեր Դավիթ Ղազարյանի, «Մենյու էյէմ» ընկերության հիմնադիր Վահան Քերոբյանի հետ:

Նոյեմբերի 27-ին ՀՀ վարչապետը ընդունել էր նաեւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն Հրանտ Թադեւոսյանին, «ՌԵՆՇԻՆ» շինարարական-ներդրումային ընկերության գլխավոր տնօրեն Էդուարդ Մարությանին, «Նուշիկյան ասոցիացիա» ընկերության հիմնադիր նախագահ Գարեգին Նուշիկյանին:

## ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՂԵՏԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

***Հայաստանի եւ Արցախի Հանրապետության կառավարությունների համատեղ աշխատանքային խումբ է ստեղծվել՝ Արցախում առաջացած հումանիտար աղետի հակազդման նպատակով:***

Հայաստանի վարչապետի որոշմամբ, սեպտեմբերի 27-ին ադրբեջանաթուրքահաբեկչական ագրեսիայի եւ սանձազերծած պատերազմի հետեւանքով Արցախում առաջացած հումանիտար աղետի հակազդման, քաղաքացիական ենթակառուցվածքների, Արցախի բնականոն կենսագործունեության վերականգնման եւ տեղահանվածների ապահով ու արժանապատիվ վերադարձի նպատակով ստեղծվում է աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի գործունեությունը իրականացվելու է սոցիալական, կրթության, առողջապահության, ձեռնարկատիրական, ենթակառույցների ոլորտներում:

Աշխատանքային խմբի ղեկավար է նշանակվել Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը: Աշխատանքային խմբի կազմում են ինչպես Հայաստանից, այնպես էլ՝ Արցախից մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Արցախի պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը:

## ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրերով, անձնական դիմումի հիման վրա պաշտոնաթող եղավ Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը: Նա պաշտոնը զբաղեցնում էր 2018 թվականի մայիսից: Նրա փոխարեն նախարար է նշանակվել է 64 ամյա Վաղարշակ Հարությունյանը, ով 1999-2000 թվականներին զբաղեցրել է պաշտպանության նախարարի պաշտոնը: Նա ծնվել է Ախալքալաքիի շրջանի Մեծ Սամսար գյուղում:

Հայաստանի նախագահի հրամանագրով Տիգրան Խաչատրյանն ազատվել է Հայաստանի էկոնոմիկայի նախարարի պաշտոնից: Այդ պաշտոնում նշանակվել է Վահան Քերոբյանը: Նա արմատներով Ախալքալաքիի շրջանի Կարծախ գյուղից է:

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար է նշանակվել Վահրամ Դումանյանը: Նա այդ պաշտոնում փոխարինեց Արայիկ Հարությունյանին, որը նշանակվել է վարչապետի գլխավոր խորհրդական:

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՄԱՀԱՑԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԻԿԻՆ ՌԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Նոյեմբերի 20-ին, Գերմանիայում, կորոնավիրուսից 58 տարեկան հասակում, վախճանվեց Հայաստանի երրորդ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանը:

Ժամանակին Ռիտա Սարգսյանը եղել է «Նվիրիր կյանք» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, իր կարեւոր դերակատարումն է ունեցել արյան քաղցկեղի դեմ պայքարող հայ փոքրիկներին աջակցելու գործում՝ նպաստելով մանկական առողջապահության ոլորտի մի շարք խնդիրների լուծմանը: Նրա գործունեության արդյունքում վերակառուցվել են առողջապահական եւ ուսումնական հաստատություններ: Տիկին Սարգսյանը նաեւ ծավալել է գնահատելի սոցիալ-հասարակական գործունեություն, աջակցել մշակութային կյանքի աշխուժացմանը:

Նշենք, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Արմեն Սարգսյանը ցավակցական հեռագիր են հղել Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին՝ կնոջ՝ Ռիտա Սարգսյանի մահվան կապակցությամբ:

«Վրաստան» թերթի կողմից ավելացնենք, որ Ռիտա Սարգսյանը կարեւոր դերակատարություն է ունեցել նաեւ Թբիլիսիի «Թումանյանի տան» ձեւավորման գործում: Նրա անմիջական մասնակցությամբ իրականացվել է թումանյանական տան վերջին կահավորումը:

***Թբիլիսիի «Թումանյանի տուն» կենտրոնի աշխատակազմը, «Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես ցավում են տիկին Ռիտա Ալեքսանդրի Սարգսյանի վաղաժամ մահվան կապակցությամբ եւ վշտակցում հարազատներին:***

## ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ԶԱՎԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ

73 տարեկան հասակում մահացել է Երեւանի Սերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանը:

Զավեն Սարգսյանը ծնվել է Երեւանում, ավարտել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Եղել է «Սիրիուս» գործարանի ավագ ինժեներ, ՀԽՍՀ նախարարների խորհրդի գործերի կառավարչության արտաքին կապերի բաժնի ավագ ռեֆերենտ: 1986 թվականին նշանակվել է Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանի տնօրեն: Այդ պաշտոնում աշխատել է մինչեւ 1992 թվականը: 1992-ից մինչ օրս ղեկավարում էր Սերգեյ Փարաջանովի թանգարանը:

Զավեն Սարգսյանը որպես լուսանկարիչ աշխատել է Փարաջանովի հետ: Անհատական ցուցահանդեսներ ունեցել Հայաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Չինաստանում եւ մի շարք այլ երկրներում: Պարգեւատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՐՑԸ

***Նոյեմբերի 27-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, մեկ ժամվա ընթացքում, երկու անգամ հեռախոսազրույց է ունեցել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:***

***«Քննարկման առանցքում էին Լաչինի միջանցքի բնակավայրերի, անհետ կորածների, որոնողական աշխատանքների, զոհվածների մարմինների, գերիների փոխանակման գործընթացի, խաղաղապահների տեղակայման եւ սահմանազատման, ինչպես նաեւ՝ տարածաշրջանի տրանսպորտային կոմունիկացիաների ապաշրջափակման հետ կապված հարցեր:***

***«Նման քննարկումներ պարբերաբար են տեղի ունենում, երբեմն օրը մի քանի անգամ: Այս քննարկումների մասին միշտ չէ, որ հաղորդագրություններ ենք տարածում, հաշվի առնելով դրանց աշխատանքային բնույթը եւ հաճախությունը»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է վարչապետը:***

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է 6,7 ՏՈԿՈՍՈՎ

***Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշն այս տարվա հունվար-հոկտեմբերին 6.7 տոկոսով նվազել է 2019-ի նույն ժամանակահատվածի համեմատ:***

***Տնտեսական ակտիվության նվազումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակով, որի հետեւանքով անկումներ են արձանագրվում աշխարհի գրեթե բոլոր երկրների տնտեսություններում:***

### ԳՐԱՆՑՎԵԼ Է ՀԱՄԱԽՍՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՃ

***Հայաստանի համախառն ներքին արդյունքը, 2020-ի երրորդ եռամսյակում, նախնական տվյալներով, կազմել է 1 տրլն 744 մլրդ 942.4 մլն դրամ (ընթացիկ գներով), որը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ՝ նվազել է 9.1 տոկոսով, իսկ 2020-ի երկրորդ եռամսյակի համեմատ՝ աճել 38.6 տոկոսով:***

***Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, Հայաստանի բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն այս տարվա հուլիս-սեպտեմբերին կազմել է 588 հազ. 434 դրամ կամ 1 212 ԱՄՆ դոլար:***

### ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԳԱԳԻԿ ՇԱՌՈՒԿՅԱՆԻՆ ՄԱՆԳԱՏԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ ԴԻՄԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

***Նոյեմբերի 24-ին, Հայաստանի Ազգային ժողովի խորհրդի նիստին որոշվել է «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանի պատգամավորական լիազորությունները դադարեցնելու հարցով դիմել Սահմանադրական դատարան:***

***Այս հարցով ՍԴ դիմելու որոշման համար՝ որպես հիմք է նշվել Սահմանադրության 95-րդ հոդվածն ու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 26-ի «Ազգային ժողովի՝ պատգամավորի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին» 03/2020 եզրակացությունը:***

***Սահմանդրության 95-րդ հոդվածով սահմանվում է, որ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որեւէ պաշտոն՝ առեւտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

***5.12.2020 Սուրբ Գրիգոր եւ Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետների եւ Մյուռոն եպիսկոպոսի հիշատակության օր***

Սուրբ Գրիգոր Սքանչելագործը ծնվել է Պոնտոսի (Սեբաստիա) Նեոկեսարիա քաղաքում, ազնվականի ընտանիքում: Գրիգորը մտադիր էր հմտանալ օրենսգիտության եւ հռետորության մեջ, սակայն Աստված նրա եւ իր եղբոր համար այլ ճանապարհ էր նախասահմանել. նրանք ուսանում են Աթենքում, ապա Պաղեստինյան Կեսարիայում՝աշակերտելով այն ժամանակվա ամենահեղինակավոր քրիստոնյա մտավորականին՝ Որոգինեսին:

Բազմաթիվ հրաշագործությունների համար արժանացել է «Սքանչելագործ» մակդիրին:

Սուրբ Նիկողայոս Հայրապետը ծնվել է Փոքր Ասիայի Լիկիա գավառի Բաթարա քաղաքում (ներկայիս Անթալիայի մոտակայք): Փոքր հասակից կորցնում է մեծահարուստ եւ բարեպաշտ ծնողներին եւ մեծանում քեռու՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքի ներքո: Դառնում է Զմյուռնիայի եպիսկոպոսը:

325թ. մասնակցում է Նիկիո Տիեզերաժողովին: Մահացել է 326 թվականին:

Սուրբ Մյուռոն եպիսկոպոսը ծնվել է մոտ 350 թվականին: Նա մեծ հրաշագործ էր: Քրիստոնյաների հալածանքների ժամանակ, ինքը եւս անհամբեր սպասում էր նահատակության պսակն ստանալուն: Սակայն հասնում է մինչեւ խոր ծերություն՝ 100 տարեկանում ավարտելով իր բարեպաշտ կյանքը:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԵԿԵՏ

## ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ-ՍԱԴԱԽԼՈ ԵՎ ԳՈԳԱՎԱՆ-ԳՈՒԳՈՒԹԻ ԱՆՑԱԿԵՏԵՐԸ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ1-Ի Ց ԿԲԱՑՎԵՆ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանում Հայաստանի դեսպանությունը, բեռնատար տրանսպորտային միջոցների համար դեկտեմբերի 1-ի ժամը 00:01 րոպեից կբացվեն հայ-վրացական սահմանի Բագրատաշեն-Սադախլո եւ Գոգավան-Գուգութի անցակետերը:

Նշենք, որ դեսպանության հավաստմամբ, հայ-վրացական սահմանի Բավրա-Նինոծմինդա անցակետը կշարունակի աշխատել մինչ օրս գործողության մեջ եղած շուրջօրյա ռեժիմով:

## ՄԱՀԱՑԵԼ Է ՖՈՒՏԲՈԼԻ ԼԵԳԵՆԴ ԴԻԵԳՈ ԱՐՄԱՆԴՈ ՄԱՐԱԴՈՆԱՆ

***Նոյեմբերի 25-ին, կյանքի 61-րդ տարում, մահացել է աշխարհահռչակ ֆուտբոլիստ, Ֆուտբոլի աշխարհի չեմպիոն Դիեգո Մարադոնան: Արգենտինացի լեգենդար ֆուտբոլիստը հանկարծամահ է եղել սրտի կաթվածից:***

Վերջին անգամ հանրության առջեւ Մարադոնային տեսել էին հոկտեմբերի 30-ին՝ «Խիմնազիա» - «Պատրոնատո» հանդիպմանը: Այդ օրը լեգենդը դարձավ 60 տարեկան եւ խաղից առաջ նրան փոխանցել են հիշարժան նվերներ: Ավելի ուշ Մարադոնան տեղափոխվել էր Լա Պլատայի կլինիկա, որտեղ շտապ վիրահատվել էր՝ ուղեղից հեմատոմա հեռացնելու համար:

Դիեգո Մարադոնան 1986թ. Արգենտինայի հավաքականի կազմում նվաճել է Ֆուտբոլի աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Արգենտինայի կառավարության որոշմամբ, Դիեգո Մարադոնայի մահվան կապակցությամբ, երկրում եռօրյա սուգ էր հայտարարվել, Բուենոս-Այրեսի կենտրոնական խաղադաշտը կոչվելու է Դիեգո Մարադոնայի անունով:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## TBC-Ի ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԱՎԱՐՏՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ

***TBC-ին, կորպորացիոն սոցիալական շրջանակներում, հիմնեց ռիսկերի կառավարման ուղղությունների ակադեմիա: Հանրակրթական նախագծի նպատակը երիտասարդների համար բանկային ռիսկերի հարցերով որակավորման բարձրացումն է, շնորհակալ կադրերի բացահայտումն ու կրթության աջակցությունը:***

TBC ACADEMY
TBC ACADEMY
TBC ACADEMY